ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱԿԱՆԱՎՈՐ ՏՆՏԵՍԱԳԵՏԸ

(Ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանի ծննդյան 60-ամյակի առթիվ)

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, ականավոր տնտեսագետ Արտաշես Առաքելյանը ծնվել է 1909 թ. ապրիլի 28-ին, Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում։

1932 թ. ավարտելով Բաքվի ժողովրդական տնտեսության ինստիտուտը, աշխատանքի է նշանակվում Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում, որպես մարզային պլանային հանձնաժողովի նախագահի տեղակալ։

1933 թ. նա արդեն Մոսկվայի պլանային ինստիտուտի ասպիրանտ էր, այնուհետև՝ ՍՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող։ Շուրջ քառորդ դար աշխատելով այդ ինստիտուտում, նա հրատարակեց մոտ 800 մամուլ ծավալով ավելի քան 200 արժեքավոր մենագրություններ, դասագրքեր և գիտական հոդվածներ։ Այդ աշխատությունների մի զգալի մասը (մոտ կեսը) հրատարակվել է նաև անգլերեն, գերմաներեն, իտալերեն, ֆրանսերեն, հունգարերեն, ճապոներեն և այլ լեզուներով։

Ա. Առաքելյանը նախապատերազմյան տարիներին, ինչպես նաև հետագայում հրատարակեց «ՍՍՀՄ արդյունաբերության հիմնական ֆոնդերը» (1938 թ.) և «Հիմնական ֆոնդերի օգտագործումը» (1950 թ.) արժեքավոր աշխատությունները, «Տնտհաշվարկը և հիմնական ֆոնդերի օգտագործումը» խորագիրը կրող ուսումնասիրությունը (1954 թ.)։ Մոսկվայում այժմ լույս է տեսնում «Ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերի վերարտադրությունը» ծավալուն հետազոտությունը։

Հիմնական ֆոնդերի վերարտադրության և արդյունավետության, ինչպես նաև կառավարման ու տնտհաշվարկի տեսության մի շարք հարցերի գիտական մշակման ասպարեզում զգալի ներդրում են ակադեմիկոս Ա. Առաքելյանի աշխատությունները։ «Սոցիալիստական արդյունաբերության կառավարումը» (1947 թ.) աշխատությունը, կառավարման հարցերի վերաբերյալ առաջին կապիտալ ուսումնասիրությունն էր։ Այդ տեսությունն իր հետագա զարգացումը ստացավ «Տնտհաշվարկը ՍՍՀՄ արդյունաբերության մեջ» մենագրությունում (1956 թ., Մոսկվա), ուր գիտական խորությամբ բացահայտվում է ոչ միայն տնտհաշվարկի, որպես սոցիալիզմի տնտեսության կառավարման պլանային մեթոդի, և սոցիալիզմի տնտեսական կատեգորիաների էությունն ու գիտական հիմնավորումը, այլև կառավարման օղակների տնտհաշվարկին անցնելու անհրաժեշտությունը։

Ա. Առաքելյանի ուսումնասիրությունների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում տեխնիկական առաջադիմության, պլանավորման տեսական ու գործնական նշանակություն ունեցող պրոբլեմները։ 1955 թ. լույս են տեսնում «Աշխատանքի արտադրողականությունը սոցիալիստական հասարակարգում», «Աշխատանքի արտադրողականության մասին Վ. Ի. Լենինի գաղափարների կենսական ուժը» և այլ աշխատություններ։

Վերջին տարիներին ակադեմիկոս Առաքելյանը անմիջականորեն զբաղվում էր Անդրկովկասի և Հայաստանի արդյունաբերության պլանավորման և տնտեսական զարգացման հարցերով։ Նա հրատարակել է՝ «Ժողովրդական տնտեսության պլանավորման փորձը Անդրկովկասում» (1963 թ.)։

«Հայաստանը ինդուստրիալ հանրապետություն է» (1967 թ.), «Անդրկովկասի ժողովուրդների տնտեսական համագործակցությունը և փոխադարձ օգնությունը» (1958 թ.) գրքույկները և բազմաթիվ հոդվածներ։ Անգլերեն և ֆրանսերեն լեզուներով լույս է տեսել Հայաստանի արդյունաբերության զարգացման հարցերին նվիրված աշխատությունը։

Ա. Առաքելյանի տնտեսագիտական հետազոտությունների շրջանակը չափազանց լայն է, նրա արծարծած հարցերը խիստ արդիական են։

Գիտության անխոնջ մշակի ստեղծագործության արգասիքն են նաև տնտեսագիտական մի շարք բուհական դասագրքեր։ Դեռևս 1940 թ. նրա հեղինակակցությամբ ՍՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտը հրատարակեց «Սոցիալիստական արդյունաբերության էկոնոմիկան», իսկ 1956 թ.՝ «ՍՍՀՄ արդյունաբերության էկոնոմիկան», որի հեղինակներից և խմբագիրներից մեկը Ա. Առաքելյանն է։ 1963 թ. Մոսկվայի պետական համալսարանը Ա. Առաքելյանի հեղինակակցությամբ հրատարակում է քաղաքատնտեսության երկհատորյա ձեռնարկը, որն այս տարի վերահրատարակվում է։ 1964 թ. այդ գրքի համար նա արժանացել է Լոմոնոսովի անվան մրցանակին։

Մայրենի լեզվով քաղաքատնտեսության ուսումնական ձեռնարկ ստեղծելու առաջին հայ հեղինակը ակադեմիկոս Առաքելյանն է։ Այդ ձեռնարկը մոտ մեկ տասնամյակ է, ինչ դարձել է բուհերի ուսանողների անբաժան ուղեկիցն ու սեղանի գիրքը։

Արտաշես Առաքելյանի գիտական գործունեությունն ամբողջականացնում են կազմակերպչական այն մեծ ջանքերը, որ նա ներդնում է տնտեսական գիտության զարգացման բնագավառում։ 1960 թ. տեղափոխվելով Հայաստան և ստանձնելով ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի դիրեկտորի պաշտոնը, ձեռնամուխ է լինում ինստիտուտում տարվող գիտա-հետազոտական թեմատիկայի բարելավմանը։ Նրա ջանքերի շնորհիվ ինստիտուտը զգալի նվաճումներ ունի գիտական հետազոտությունների և կադրերի պատրաստման ասպարեզում։

Բազմավաստակ գիտնականը տնտեսագիտության մի շարք առարկաների հանրաճանաչ դասախոս է։ Դեռևս ասպիրանտական տարիներից՝ տակավին երիտասարդ հասակից մինչև օրս, համարյա 40 տարի, դասավանդում է բուհերում։ 1941—1945 թվականներին մասնակցել է Հայրենական Մեծ պատերազմին, կռվել գերմանական ֆաշիզմի դեմ։ Նա պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշանով և հինգ մեդալներով։ Պատերազմն ավարտվելուց հետո ստանձնել է ՍՍՀՄ ԱԳՄ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի քաղաքատնտեսության ամբիոնի պրոֆեսորի պարտականությունը, իսկ այժմ դասախոսում է Երևանի պետական համալսարանում։

Մեծ են Ա. Առաքելյանի ծառայությունները մեր երկրում տնտեսագիտական կադրերի պատրաստման գործում։ Նրա գիտական ղեկավարությամբ ավելի քան 50 ասպիրանտներ դարձել են տնտեսական գիտության թեկնածուներ, պատրաստել է նաև տնտեսագիտության դոկտորներ։

Արտաշես Առաքելյանը ակտիվ մասնակցություն է ունենում հանրապետության կուսակցական ու հասարակական կյանքին։